Լաւ եւ առաքինի բնաւորութիւնը կարող է
հետ կանգել կայսերական բեռից:

Պլատոն, Հանրապետութիւն
Գիրք առաջին

Եւ այսպէս Թրասիմախոս, այլեւս ոչ մի կասկած չկայ, որ ոչ մի արուեստ եւ իշխանութիւն իր անձնական շահի համար չի գործում, եւ, ինպէս արդէն նշել էինք, նրանք կառավարում եւ հետապնդում են աւելի թույլ հպատակների շահերը, այլ ոչ թէ ուժեղներինը՝ տկարի եւ հպատակի շահերը գերադասելով աւելի ուժեղին (զօրաւորին):
Իմ թանկագին Թրասիմախոս, ինչպէս հենց նոր ասացի, սա է պատճառը, թէ ինչու ոչ ոք կամովին չի ցանկանում իշխել, քանզի ոչ ոք առանց վարձատրութեան չի ցանկանում իր ձեռքը վերցնել ուրիշների դժուարութիւններն ու խնդիրները եւ փորձել դրանք լուծել:

Քանզի իրական վարպէտը (արուեստագէտը) իր գործունէութեան եւ ուրիշին յանձնարարական տալու մէջ ոչ թէ իր անձնական շահերն է հետապնդում, այլ իր հպատակինը, դրա համար որպէսզի կառավարիչները ցանկանային կառավարել, նրանք պէտք է վարձատրուեն [վարձատրութեան] երեք եղանակներից որեւէ մէկով՝ դրամով, պատուով կամ պատասխանատուութիւնից խուսափելու համար վճարուող տուգանքով:

- Ի՞նչ ինիկատի ունես, Սոկրատէս,- հարցրեց Գլաւկոնը: Առաջին երկու եղանակները բաւականաչափ հասկանալի են, սակայն խուսափելու համար վճարուող տուգանքը ինձ համար անհասկանալի է. եւ ինչպէ՞ս կարող է տուգանքը վարձատրութիւն լինել:

- Դու ուզում ես ասել, որ չե՞ս հասկանում այս վարձատրութեան էութիւնը, որը լաւագոյն մարդկանց համար կառավարելու ամէնամեծ դրդապատճառն է: Դու չը գիտե՞ս, որ փառասիրութիւնն ու ագահութիւնը խայտառակութիւն են համարւում:

- Շատ ճիշտ է:

- Եւ ես ասացի, որ այս պատճառով փողն ու պատիւը նրանց չեն գրաւում: Լաւ մարդիկ չեն ցանկանում կառավարելու համար բացայայտօրէն վարձատրութիւն պահանջել եւ դրանով վարձկանի անուն վաստակել, ոչ էլ

գաղտնիաբար հասարակութեան եկամուտները անձնական շահերի համար օգտագործել՝ դրանով գողի անուն վաստակելով: Եւ ոչ էլ պատուի համար կ'անեն դա, քանի որ փառասէր չեն:

Դրա համար էլ պարտակւորութիւն պէտք է դնել նրանց վրայ, եւ նրանք պատժուելու վախից ստիպուած կը լինեն ծառայել:
Եւ ինչպէս ես ենթադրում եմ, սա է պատճառը, թէ ինչու ստիպուած պաշտօնավարելու փոխարէն պաշտօնի ետեւից վազելն է համարւում ամօթալի:
Իսկ ամենամեծ պատժը այն է, որ նա, ով հրաժարւում է կառավարել՝ ստիպուած է լինում ենթարկուել իրենից աւելի վատ կառավարչին:

Ես կարծում եմ, որ բարի մարդիկ նշուածի յանդէպ վախից դրդուած են իշխում, ոչ թէ այն պատճառով, որ ցանկանում են, այլ որովհետեւ նրանք ուրիշ ելք չունեն, ոչ թէ այն պատճառով, որ նրանք կարող են այդ պաշտօնից որեւէ շահ կամ յաճոյք ստանալ, այլ այն պատճառով, որ դա անխուսափելի է, որովհետեւ նրանք հնարաւորութիւն չունեն պետական ղեկը իրենց նման կամ իրենցից լաւ մարդկանց յանձնել:

Դա թոյլ է տալիս մտածել, որ եթէ քաղաքը բացառապէս կազմէին բարի մարդիկ, ապայ պաշտօնից խուսափելը նոյնչափ մրցակցութեան առարկայ կը դառնար, ինչքանով որ այժմ պաշտօն ստանալն է [մրցակցութեան առարկայ]:
Հետեւապէս մենք շատ պարզ փաստարկ ունենք, ըստ որի՝ ճշմարիտ՝ կառավարչի էութիւնը չի կայանում իր անձնական շահերը, այլ իր հպատակների, ենթակաների շահերը պաշտպանելը, եւ ով որ սա գիտակցում է, ի հարկէ կը նախընտրի պարգեւատրում ստանալ ուրիշից քան այլ մարդուն պարգեւտրում տալ:
Ես համաձայն չեմ Թրասիմախոսի այն պնդման հետ, ըստ որի արդարութիւնը զօրաւորի իրաւունքն է:

Ներկայումս այս վերջին հարցի քննարկումն այլեւս չպէտք է շարունակուի:
Բայց Թրասիմախոսն ասում է, որ անարդար կեանքն աւելի շահաւետ է քան արդարը, եւ նրա այդ նոր պնդումը, ինձ անհամեմատ աւելի կարեւոր նշանակութիւն ունեցող հարց է թւում:
Մեզանից ո՞վ աւելի ճիշտ խօսեց: Եւ կեանքի ո՞ր ձեւն ես դու նախընտրում, Գլաւկոն:

Նա պատասխանեց,- Իմ կարծիքով արդար մարդու կեանքն է աւելի շահաւետ (գերադասելի):

Պլատոն, Հանրապետութիւն
Գիրք հինգերորդ

Այս դրութիւնից դուրս գալու միակ ելքն է հետեւեալը. կամ փիլիսոփաները պիտի դառնան թագաւորներ իրենց երկրներում, կամ մեր իշխող խաւը պէտք է իրական իմաստասէր լինեն, այլ խօսքով, քաղաքական ուժը եւ փիլիսոփայութիւնը պէտք է շաղկապուեն: Իմ սիրելի Գլաուկոն, քանի դեռ տարբեր բնաւորութիւնների տէր մարդիկ չեն հարկադրւում իրենց անձնական հակումները սանձելու, պետական կառավարման մէջ թերութիւնները չեն վերանայ, ո՛չ պետութիւնների եւ ո՛չ էլ ողջ մարդկութեան համար:

Պլատոն, Հանրապետութիւն
Գիրք եօթերորդ

- Ուրեմն մեր պարտականութիւնն է, ասացի ես, իբրեւ քաղաքի հիմնադիրների, ստիպել ազնիւ բնաւորութիւն ունեցողներին դէպի այն ուսմունքները, որոնց մասին մենք նախապէս խօսեցինք. իբրեւ ամենաբարձր առարկաների. նրանք պէտք է շարունակեն բարձրանալ այնքան, մինչեւ հասնեն կատարելութեանը (բարձունքին), եւ երբ նրանք արդէն հասնեն այդ բարձունքին եւ բաւականաչափ բան տեսնեն, մենք նրանց երբէք թոյլ չպէտք է տանք զբաղուելու այն բաներով, որոնցով նրանք այժմ են զբաղւում:

- Ինչի՞ մասին է խօսքը:

- Այդ բարձունքի (կատարելութեան) վրա հաստատ մնալ, ասացի ես: Բայց սա չպէտք է թոյլ տրուի. նրանք նորից պէտք է ներքեւ իջնեն իրենց շղթայակիցների մօտ եւ մասնակից լինեն նրանց տանջանքներին, որպէսզի հասկանան, թէ արդէօք նրանք դրան արժանի են, թէ՝ ոչ:

Բայց դա անարդար չէ՞,- ասաց նա,- եթէ մենք ստիպենք նրանց ապրել վատ կեանքով, երբ նրանք արդէն լաւագոյն կեանքին հասել են
Բայց դու նորից մոռանում ես, ասացի ես, բարեկամս, որ օրէնքի (օրենսդիրների) նպատակը քաղաքում սոսկ մի յատուկ դասակարգի

յաջողութեան վրա ազդելը չէ, այլ այնպիսի հնարաւորութիւն ստեղծելը, որ այն բոլորի երջանկութեան վրա ազդի, դրդելով բոլոր քաղաքացիներին, համոզմամբ կամ ստիպմամբ, փոխադարձ օժանդակել միմեանց, ինչ չափով որ նրանցից իւրաքանչիւրը կարող է հասարակական գործին օժանդակել եւ այս հանգամանքը ինքնին քաղաքացիներին այնպէս կը դասաւորէր, որ նրանցից իւրաքանչիւրը ազատ չէր լինի վարուելու ըստ իր հաճոյքի, այլ կը դառնար միջոց պետական համակարգը ամրապնդելու գործում:

- Իսկապէս որ, նա ասաց, մոռացել էի:

Նկատիր, ո՛վ Գլաւկոն, ասացի, որ մենք անարդարութիւն չենք գործի, եթէ մեր փիլիսոփաներին ստիպենք, որ հասարակութեան նկատմամբ հոգատարութիւն ցուցաբերեն եւ պաշտպանեն այն: Քանզի մենք նրանց կը բացատրենք, որ այլ քաղաքների փիլիսոփաները պարտաւորուած չեն մասնակցել հասարակական աշխատանքներին. - քանի որ նրանք ազատակամ են մեծանում, պետութիւնը չի ցանկանա ունենալ նրանց նման փիլիսոփաներ:
Ինքնուսը, որն իր աճի, զարգացման համար չի օգտուել պետութեան օժանդակութիւնից, չը պէտք է ձգտի իր փոխադարձ երախտագիտութիւնը յայտնել պետութիւնը:

Բայց ձեզ մենք պատրաստել ենք որպէս փեթակի մեղուի-թագաւոր (կառավարիչ), ձեր եւ ամբողջ պետութեան թագաւոր: Դուք նրանցից աւելի լաւ եւ կատարելագոյն դաստիարակութիւն եք ստացել, հետեւաբար աւելի լաւ կերպով պէտք է կարողանաք համատեղել այս երկու պարտականութիւնները:

Ուրեմն, ձեզանից իւրաքանչիւրը, երբ իր ժամանակը գայ, պէտք է իջնի ներքեւ՝ ստորգետնյա կացարան, եւ վարժուի ստուերային կեանքին:

Քանզի վարժուելով այդ տեղի կեանքին, դուք հազարաւոր անգամ առաւել լաւ կը տեսնէք այնտեղ կատարուող երեւոյթները, քան տեղացիները: Եւ աւելի լաւ կը ճանաչէք նրանց իսկութիւնը՝ թէ ի՞նչ նշանակութիւն ունեն դրանք եւ ի՞նչ բանի օրինակներ են, քանզի դուք տեսել եք ճշմարիտը, գեղեցիկը, արդարը եր բարին:

Եւ այսպէս, մեր քաղաքը, որը նաեւ ձերն է, կը դառնայ իրականութիւն, ոչ թէ սոսկ երազ, եւ չի կառավարուի այլ քաղաքաների ոգով, ուր մարդիկ կռուում են իրար հետ կեղծ արժեքների համար, վատնելով իրենց ուժերը իշխանութեան համար պայքարում, կարծելով, թէ դա մի ինչ որ մեծ գործ է:

Մինչդեռ իրողութիւնը թերեւս այն է, որ մի քաղաքում, ուր կառավարողները նւազագոյն չափով կը ցանկանան իշխել՝ ամենաազնիւ իշխանութիւնը կը տիրի եւ ստիպողաբար երկպառատութիւնից զերծ կը լինի, եւ այնտեղ, ուր նրանք աւելի եռնադուն կերպով կցանկանան իշխել՝ ճիշտ հակառակ իշխանութիւնն կը տիրի:

- Անկասկած,- պատասխանեց նա:

Եւ երբ մեր աշակերտները սա լսեն, կը հրաժարուե՞ն արդէօք իրէնց մասնակցութիւնը բերել հասարակական կեանքի աշխատանքներում, երբ հնարաւորութիւն ունեն իրենց ժամանակի մեծ մասը անցկացնել իրար հետ՝ ապրելով երկնային լուսաւորութեան մէջ:

Հնարաւոր չի, որ նրանք մերժեն, ասաց նա, քանզի նրանք արդար են, եւ այն պարտաւորութիւնները, որոնք մենք դնում ենք նրանց վրա, նոյնպէս արդար են: Եւ ոչ մի կասկած չը կայ, որ նրանք պիտի պաշտօններ վերցնեն խիստ անյրաժեշտութեան պատճառով, ճիշտ յակառակ զանազան քաղաքներում մեր արդի իշխողներին:

Այսպէս է բանը, ասացի ես, ով ընկեր:

Դու քո ապագա կառավառողների համար պէտք է գտնես աւելի լաւ կեանք, եւ այդ ժամանակ դու կարող ես լաւ կառավարուող պետութիւն ունենալ, քանզի այսպիսի պետութիւնում միայն կկառավարեն նրանք, ովքեր իսկապէս հարուստ են, ոչ թէ ոսկով կամ արծաթով, այլ առաքինութեամբ եւ գիտելիքով, որոնք կեանքի գլխաւոր օրհնութիւններն են:
Մինչդեռ եթէ աղքատներն ու թշուառականները իրենց անձնական շահերը յետապնդելով պետական գործերին մասնակցեն, յուսալով որ այդ տեղից կը ճանկեն, կը ստանան իրենց գլխաւոր բարիքը, այն ժամանակ, ի հարկէ անյնար է, որ այնտեղ կարգուկանոն լինիլ, քանի որ իրար հետ կը պայքարեն պաշտօն զբաղեցնելու համար, եւ այդպէս ձեւաւորուած հասարակութիւնը կկործանի եւ կառավարողներին եւ նմանապէս ամբողջ քաղաքը:

Շատ ճիշտ ասացիր,- կրկնեց նա:

Եւ միայկ կեանքը, որն առյամարում է քաղաքական փառասիրութեանը՝ իրական փիլիսոփայութիւնն է: Դու ուրիշ մէկը գիտե՞ս:

Իսկապէս ոչ, ասաց նա:

Եւ կառավարողները չպէտք է իշխանութեան սիրահար լինեն: Եւ եթէ նոյնիկս այդպէս լինի, ապայ իշխանութեան սիրահարները պէտք է մրցակիցներ լինեն եւ նրանք պէտք է պայքարեն իշխանութեան համար:

-Անտարակոյս: